№ 29 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 11 — 1897 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 11 № 29

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ"
(25-ՐԴ ՏԱՐԻ)
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կէս տարվանը՝ 6 ռուբլի
Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK».

ԱՅՐԻ ԵՒ ՈՐԴԻՔ
ԿԱՐԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

Խորին վշտով յայտնում են նրա մահը, որ տեղի ունեցաւ ներկայ մարտ ամսի 7-ին։ Յուղարկաւորութիւնը կը կատարվի չորեքշաբթի, մարտի 12-ին, առաւօտեան 10½ ժամին իր սեփական տանից դէպի Քամոյանց ս. Գէորգ եկեղեցին և այնտեղից Խոջիվանքի գերեզմանատունը։ Ամփիոփը երեքշաբթի, երեկոյեան 7 ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ նոյն վիճակը. Եւրոպան Յունաստանի դէմ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան կառավարչապետի լիազօրութիւնները. Նամակ Բաթումից. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Բոլգարիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արևելք.

ԴԱՐՁԵԱԼ ՆՈՅՆ ՎԻՃԱԿԸ

Եւրոպական հիւպատոսների, լրագրական թղթակիցների և զանազան ճանապարհորդների տեղեկութիւնները միաբերան հաստատում են, որ մեր հարևան փոքր-Ասիայի զիւղական ժողովուրդը անցեալ տարի չէր կարողացել ընդարձակ կերպով մշակել իր հողերը և այդ պատճառով քիչ արդիւնք էր վերցրել թէ հացով և թէ ուրիշ հունդերով։ Մինչդեռ տարին աջող էր և եղած հունձը բաւական, այնպէս որ եթէ դաշտերը առաջվայ պէս հերկված և վարված լինէին, աղքատացած ժողովուրդը կարողութիւն կունենար գոնէ օրական ապրուստի և անհրաժեշտ պէտքերի հոգսը իր վրա վերցնել, առանց դիմելու կողմնակի և օտար օգնութեան։

Սակայն այն, ինչ տեղի ունեցաւ անցեալ տարի, կարծես նոյն չափով պէտք է կրկնվի և այս գարնան ու ամառը։ Սերմացուի պակասութեան մասին արդէն մենք հաղորդեցինք տեղեկութիւններ մեր լրագրի մէջ։ Եթէ ամենակարճ միջոցում ջանքեր չեն գործ դնվի հողագործ ժողովրդի ձեռքը տալու բաւականաչափ սերմացու, նա դարձեալ կը մնայ առանց աշխատանքի և արդիւնաբերութեան, դարձեալ կարօտ կը մնայ, սպասելով դրսի օգնութեան։

Քաղաքաւանութեան մէջ վաղուց ընդունված մի ճշմարտութիւն է ճանաչված այն, որ մի երկրի մէջ ամենանշանաւորն է նրա ընթացիկ արդիւնաբերութիւնը, նրա ժողովրդի շարունակվող աշխատանքը։ Արդիւնաբերող մի այնպիսի տարը, ինչպէս հայն է, մի տարվայ ընթացքում կարող է, կանոնաւոր տնտեսութեամբ, մշակել այնքան հող և պատրաստել այնքան արտաքին դրամ, որ կարող կը լինի իր առօրեայ հոգսերի մի նշանաւոր մասը ապահովել։ Եւ միայն այդ ձևով կարելի է միլիոնաւոր ժողովուրդին կերակրել բաւարար կերպով և ազատել նրան մասնաւոր նպաստներին դիմելուց, որոնք անկարող են գոհացնել ամբողջ մի ազգաբնակութիւն, որքան և մեծ լինէին այդ նպաստները։ Մանաւանդ ծանր են դրանք մի այնպիսի ժողովրդի համար, որ սովոր է աշխատանքի, սիրում է աշխատանքը և ինքն է միշտ պատրաստել իր ապրուստի միջոցները։

Կ. Պոլսի լրագրիները հաղորդեցին մի քանի լուրեր, թէ Թիւրքաց կառավարութիւնը կարգադրել է սերմացու տալ ժողովրդի ձեռքը։ Սակայն նշանակված նպաստը այնքան փոքր է, որ հազարաւոր գիւղերի համար նա ոչ մի էական նշանակութիւն ունենալ չէ կարող։ Գոնէ այս հասարակ և քաղաքական տեսակէտից անմեղ խնդրում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը մի աջող գործ կատարէր, տալով ժողովրդին վարուցանքսի համար միջոցներ։ Բայց, ի հարկէ, այստեղ պահանջվում է իսկական, լուրջ և արագ գործունէութիւն բազմաթիւ գործակալների միջոցով և ոչ մի օգուտ չեն բերի անվերջ խորհրդակցութիւններ և քաղաքագիտութիւններ, որոնցից երբէք չէ խաբվել Թիւրքաց կառավարութիւնը և պատժվել է միայն հայ ազգաբնակութիւնը։

ԵՒՐՈՊԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԷՄ

Յունաստանը, ինչպէս յայտնի է, մերժողական պատասխան տուեց միացած Եւրոպայի պահանջներին։ Այդ օրից առանձին կարևորութիւն ստացան ֆրանսիական պարլամենտում և սենատում տեղի ունեցող վիճաբանութիւնները, որոնք պիտի վճռէին՝ պէտք է Ֆրանսիան էլ մասնակցէ այն բռնի միջոցներին, որոնք պիտի գործադրվեն Յունաստանի դէմ, թէ ոչ։ Պատգամաւորների ժողովում, ինչպէս յայտնի է, Հանոտօ կատարեալ յաղթութիւն տարաւ. նոյնը տեղի ունեցաւ և ֆրանսիական սենատում։ Այդպիսով չը նայած այն թունդ հելլենասիրական շարժումին, որ այժմ էլ տեղի ունի Ֆրանսիայում, ֆրանսիական նաւերը կը մնան միւս եւրոպական նաւերի շարքը և կը պաշարեն թէ Կրետէն և թէ Յունաստանի ափերը։ Պաշարումը եւրոպական դաշնագիրների միջոցով, անպատասխանատու, նուիրական և անբռնաբարելի վեհապետ դարձաւ։ Այսպէս ուրեմն, մի բոլորովին նոր բռնակալութիւն հաչակվելուց և ամեն երևակայելի երաշխաւորութիւններով ամրապնդվելուց յետոյ, երբ Եւրոպան Արևելեան կայսրութիւնը բարենորոգել կամեցաւ, ուժ դիմեց։

Դիմեց նոյն միապետական իշխանութեան, որոյ բնածին բարքը, կրթութիւնը, կրօնքը և յիսուն դարերի նախապաշարումները հրամայում էին պահելու, ինչ որ ձեռքումն ունի, և մնալու ինչ որ է։

Եւ անհաւատալի բան. նոյն քրիստոնեայ Եւրոպան, որ քրիստոնեայ պապութիւնը երբէք չէր կարողացել բարեփոխել, վերկացաւ և մուսլիմական պապութիւնը բարեփոխելու յիմար կարծիքն ունեցաւ, այն ինչ Ասիան և Եւրոպան իսկ արել էին նրան՝ աշխարհիս բոլոր եկեղեցիների և աստուածպետութիւնների ամենամաշելի և ամենից լաւ երաշխաւորեալ մի մարմին։

Եւ այսպիսի մի ձեռնարկութեան համար ինչ միջոցներ էին ընտրված։ Խրատներ, յորդորներ, խնդիրներ, սպառնալիքներ։ Կարելի է միթէ այդպիսի ցնորական մարք մտացնել այդքան երկար փորձառութիւններից յետոյ։

Ի՞նչպէս կարելի է չը տեսնել, որ այս բարենորոգումների հողի վրա խալիֆի դէմ ուղղված սպառնալիք և յարձակումները ի հարկէ նոյն իսկ նրա դատին օգտաւէտ կը լինեն։ Մի մասնաւոր վեհապետ, որքան էլ ժողովրդին ատելի լինի, հէնց որ ոտքի վրա կանգնի իբրև իսլամի ախոյեան և և կամ ինքզինքը ցոյց տայ իբրև քրիստոնեայ յարձակումների դէմ, անմիջապէս իր չուրջը մօլեռանդ և յափշտակված մի հիացում բարձրացնելու վտանգ է։

Երբէք անտես չը պէտք է առնել, որ իսլամը անսահման մի վստահութիւն ունի իր անձնական այժի վրա։ Երկինքը և յաւիտենականութիւնը իրան կը պատկանին։ Ինքը լինելով բոլոր ճշմարտութեանց աղբիւրը, մի օտարի դաւանարը և մանաւանդ քրիստոնեայ մի միջամտութիւն իսկոյն մի կասկած, մի անյաղթելի սոսկում է ներշնչում։ Հէնց որ հարցը գալիս է անհաւատների յղացած մի միտք յետ մղելու մասին, վախենալու ոչինչ չը կայ, կարևորագոյն է, ընթանալ ուղիղ ճանապարհի վրա և Աստուծոյ կամացը հպատակվիլ։

Առանց կանգ առնելու սոյն վարդապետութեան գործնական արժէքի վրա և առանց մոլորվելու հազար ու մէկ վարդապետական վէճերի մէջ, որոնք իսլամը կազմում են այնպէս, ինչպէս ինքն է, կրկին հանում ենք նոյն եզրակացութեան, թէ ոչ մի աշխարհային նկատողութիւն, ոչ մի սպառնալիք, ոչ մի այժ չեն ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼՔ

II

Նախ քան չարունակելը, այս հիմնական ճշմարտութիւնը միանգամ ևս հաստատեմ։ Արևելքում, մեր ցաւերի միակ ծագումը այն անանուն ալէոն է, զոր ասիական բռնակալութիւն ենք անուանում։

Աւելորդ է ասել, որ այս ցաւի սկզբունքը ամեն անհատական յատկանիշից անկախ է։ Վեհապետը կարող է բարեսիրտ, լուսաւորեալ, արդար լինել, վէզիրները կարող են բարիք կամենալ, բայց սկզբունքը կը մնայ մի և նոյնը, այսինքն մի առանձին մարդու անհայտ միապետական իշխանութիւնը, և որքան ատեն այս սկզբունքը տիրապետէ, Արևելքը չի լինիր այլ ինչ, բայց միայն քաղաքակրթեալ Եւրոպայի թեների վրա բարձված արիւնաթաթախ մի դիակ։

Գիտենք որ Եւրոպան ոչինչ չը խնայեց յանձն առած այս տխուր դերից ազատելու համար, բայց երևի չէ իմանում, որ իր դիպլոմատիան անդիտակից գործիք դարձաւ իրաց վիճակին դժուարին կացութիւնը աւելի սաստկացնելու։ Այս ծանր ամբաստանութեան վրա կարելի է հատորներ գրել. ես կը բաւականանամ զլխաւոր կէտերը նշանակելով։

Ասիայի բռնակալութիւնը իր անձնական ճար և հնարներին թողված վիճակում, ինչպէս ամենքին յայտնի է, քիչ թէ շատ չափաւորեալ էր պալատական ապատամբութիւնների և յեղափոխութիւնների հնարքի։ Եւրոպական պետութեանց հետ ունեցած յարաբերութիւնները իրան համար ստեղծեցին մի բոլորովին նոր դրութիւն։ Իր պաշտպանողական միջոցները տարապայման բազմացան, կանոնաւոր զօրք, կազմակերպեալ ոստիկանութիւն, հեռագիրներ, բանքաների հաստատութիւններ, չքանչաններ և մինչև անգամ մի քիչ ժողովրդական կրթութիւն, որանք ամենքը իր ձեռքում այնպիսի զէնքեր դարձան, որ մինչ այն ժամանակներում Ասիայի անմշակ բռնակալութեան անծանօթ էին։ Աւելացրէք սոյն նիւթական պաշարներին դիպլոմատիական շքեղ մի մարմին, որ շրջապատեց նորին վեհափառութիւնը պաշտօնական կեղծ յարգանաց նորանոր ձևերով, և տուեց նրան այնպիսի իրաւունք և առանձնաշնորհութիւններ, որոնք անծանօթ էին Արևելքում և իսլամական ոգւոյն ծայրէ ի ծայր հակառակ։ Հաւատացեալների պետ և առաջնորդը, որին իսլամի թէօրիան կատարեալ հաւասարութեան մէջ էր պահում բոլոր մոսլիմների հետ, նոյն հաւատացեալների պետը, եւրոպական դաշնագիրների միջոցով, անպատասխանատու, նուիրական և անբռնաբարելի վեհապետ դարձաւ։ Այսպէս ուրեմն, մի բոլորովին նոր բռնակալութիւն հաչակվելուց և ամեն երևակայելի երաշխաւորութիւններով ամրապնդվելուց յետոյ, երբ Եւրոպան Արևելեան կայսրութիւնը բարենորոգել կամեցաւ, ուժ դիմեց։

Դիմեց նոյն միապետական իշխանութեան, որոյ բնածին բարքը, կրթութիւնը, կրօնքը և յիսուն դարերի նախապաշարումները հրամայում էին պահելու, ինչ որ ձեռքումն ունի, և մնալու ինչ որ է։

Եւ անհաւատալի բան. նոյն քրիստոնեայ Եւրոպան, որ քրիստոնեայ պապութիւնը երբէք չէր կարողացել բարեփոխել, վերկացաւ և մուսլիմական պապութիւնը բարեփոխելու յիմար կարծիքն ունեցաւ, այն ինչ Ասիան և Եւրոպան իսկ արել էին նրան՝ աշխարհիս բոլոր եկեղեցիների և աստուածպետութիւնների ամենամաշելի և ամենից լաւ երաշխաւորեալ մի մարմին։

Եւ այսպիսի մի ձեռնարկութեան համար ինչ միջոցներ էին ընտրված։ Խրատներ, յորդորներ, խնդիրներ, սպառնալիքներ։ Կարելի է միթէ այդպիսի ցնորական մարք մտացնել այդքան երկար փորձառութիւններից յետոյ։

Ի՞նչպէս կարելի է չը տեսնել, որ այս բարենորոգումների հողի վրա խալիֆի դէմ ուղղված սպառնալիք և յարձակումները ի հարկէ նոյն իսկ նրա դատին օգտաւէտ կը լինեն։ Մի մասնաւոր վեհապետ, որքան էլ ժողովրդին ատելի լինի, հէնց որ ոտքի վրա կանգնի իբրև իսլամի ախոյեան և և կամ ինքզինքը ցոյց տայ իբրև քրիստոնեայ յարձակումների դէմ, անմիջապէս իր չուրջը մօլեռանդ և յափշտակված մի հիացում բարձրացնելու վտանգ է։

Երբէք անտես չը պէտք է առնել, որ իսլամը անսահման մի վստահութիւն ունի իր անձնական այժի վրա։ Երկինքը և յաւիտենականութիւնը իրան կը պատկանին։ Ինքը լինելով բոլոր ճշմարտութեանց աղբիւրը, մի օտարի դաւանարը և մանաւանդ քրիստոնեայ մի միջամտութիւն իսկոյն մի կասկած, մի անյաղթելի սոսկում է ներշնչում։ Հէնց որ հարցը գալիս է անհաւատների յղացած մի միտք յետ մղելու մասին, վախենալու ոչինչ չը կայ, կարևորագոյն է, ընթանալ ուղիղ ճանապարհի վրա և Աստուծոյ կամացը հպատակվիլ։

Առանց կանգ առնելու սոյն վարդապետութեան գործնական արժէքի վրա և առանց մոլորվելու հազար ու մէկ վարդապետական վէճերի մէջ, որոնք իսլամը կազմում են այնպէս, ինչպէս ինքն է, կրկին հանում ենք նոյն եզրակացութեան, թէ ոչ մի աշխարհային նկատողութիւն, ոչ մի սպառնալիք, ոչ մի այժ չեն ա-

տալական ռումբերը չեն խնայում նոյն իսկ իտալացիներին, այնքան ամուր է եւրոպական համերաշխութիւնը Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանելու համար։

Եղբզ-Քիոսկի ադամանդեայ բանը, ի հարկէ, չատ գոհ է Եւրոպայից. և ինչպէս երեւում է վերջին հեռագիրներից, սուլթանական չքախումբը պատրաստվում է չնորհակալութիւն յայտնել Ցունաստանը զսպողներին։ Դրանց մէջ ամենից եռանդունն ու անողոքը Վիլհելմ կայսրն է։ «Новости» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ Բիսմարկի նախկին աշակերտը յայտնել է, որ եթէ Եւրոպան ձեռք վերցնի Կրետէից, ինքը միայնակ պիտի զէնք գործ ածէ իր բարեկամ սուլթանի օգտին։—Թիւրքիան այժմ սիրահարված է Գերմանիայի վրա և նոյն ոգեւորութիւնը, որ տիրում է Ցունաստանում Ֆրանսիայի վերաբերմամբ, բաշիբոզուկների հայրենիքում արտայայտվում է Գերմանիայի վերաբերմամբ։

Ցունաստանը մենակ է ամբողջ պաշտօնական Եւրոպայի դէմ. պաշարումը արդէն սկսվել է։ Ի՞նչ կը լինի յետոյ։ Շատերն ասում են թէ թիւրք-յունական պատերազմը անխուսափելի է։ Իսկ Եւրոպան հաւատացնում է թէ խաղաղութիւնը ապահովվում է այն բռնի միջոցներով, որոնք գործադրվում են Ցունաստանի և Կրետէի դէմ։ Տեսնենք։ Բայց չը մոռանանք, որ ամբողջ յոյն ազգը պատերազմ է պահանջում, իսկ Կրետէում 20,000 սպառազինված ապստամբներ վրձռել են չը խնայել վերջին կաթիլ արիւնը իրանց նպատակին հասնելու համար։—Պատերազմը դիպլոմատիայի ձեռքում չէ. դիպլոմատիան վիճում է, իսկ դէպքերը քարշ են տալիս նրան իրանց ետևից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետերբուրգից հեռագրում են «Тифлисскій Листокъ» լրագրին.—Այսօր «Прав. Вѣстн.»-ի 53-րդ համարում տպագրված է Բարձրագոյն հրաման կառավարիչ սենատին Կովկասեան կառավարչապետի իրաւունքների և պարտաւորութիւնների վերաբերմամբ, որով մինչև Կովկասեան երկրի վարչութեան համար սահմանված կանոնների օրէնսդրական կարգով քննելը հրամայված է.

1) Կովկասեան կառավարչապետը նկատելով որ և է անկարգութիւններ կամ զանցառութիւններ՝ Կովկասեան երկրի վարչական կամ հասարակական հաստատութիւնների մէջ, պարտաւոր է վճռական միջոցներ ձեռք առնել այդ անկարգութիւններին և զանցառութիւններին վերջ տալու և գործերի օրինական ընթացքը վերականգնելու համար, իր ձեռք առած միջոցների մասին զեկուցանելով որոշ վարչութիւնների գլխաւոր կառավարիչներին։

2) Արտակարգ հանգամանքներում կառավարչապետը կարող է փոխել երկրի նահանգական վարչական ատեանների և հասարակական հիմնարկութիւնների վճիռները և ի կատար ածել իր կարգադրութիւնները իր անձնական պատասխանատուութեամբ բոլոր հետեանքների մասին և այն պայմանով, որ կառավարչապետն անմիջապէս տեղեկացնի կառավարիչ սենատին և պատշաճաւոր մինիստրներին, թէ ինչ պատճառներ են իրան հարկադրել դիմելու այդ միջոցին։

3) Երբ ապացուցված է և ակնայայտի թէ մի որ և է վարչական շրջանում անբարեմտութիւն կայ և չարագործութիւն և առհասարակ այն դիպքերում, երբ չէ կարելի գործը յետաձգել, կառավարչապետին իրաւունք է տրվում անկարգութիւնների առաջն առնելու համար կովկասեան երկրի վարչական և հասարակական հիմնարկութիւնների պաշտօնեաներին հրաժարեցնել մինչև նրանց պաշտօնանկութիւնը օրինական ճանապարհով, բացի նահանգների և գաւառների առանձին մասերի կառավարիչներից և ազնուականների պարագլուխներից։

4) Կառավարչապետը իր հրաժարեցրած պաշտօնեաներին դատի ենթարկելու գործում ունի նոյն իրաւունքները և պարտաւորութիւնները, ինչ որ ունեն վերաքննութեան համար նշանակված սենատորները. գործի հանգամանքները նախ պիտի քննվեն կառավարչապետի խորհրդում։

5) Կառավարչապետին իրաւունք է տրվում, որ երբ նա հարկաւոր համարէ, երկրի առանձին մասերի կառավարիչներից պահանջէ ներկայացնել նախապէս իր հաւանութեանը այս կամ այն նոր պաշտօնեայի նշանակվելը, որ մինչև այժմ կախված էր այդ կառավարիչներից։

6) Կառավարչապետին իրաւունք է տրվում արգելել բնակվել Կովկասեան երկրի որ և է տեղում, նոյն իսկ Կովկասի սահմաններում այն անձինքներին, որոնց ներկայութիւնը ինքը կառավարչապետը կը համարի վնասակար, այդպիսի դէպքերի հանգամանքները կառավարչապետի խորհրդում քննելուց յետոյ։

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Մարտի 4-ին

Ժանտախտի կողմից՝ Բաթումը համարվում է ամենաերկիւղալի տեղերից մէկը։ Այդ պատճառով արդէն կազմված է քաղաքային սանիտարական մասնաժողով, որը հաստատվեց նահանգապետից։ Վարչութեան պարտքը պիտի լինի հոգալ մեր քաղաքի առողջապահական պայմանների մասին։

Կերօսինի գործերը, որ այս տարի այնքան էլ լաւ չէին, ժանտախտի պատճառով աւելի էլ աննախանձելի են դարձել։ Հնդկաստանը, որ ահագին քանակութեամբ կէրօսին էր ստանում, այժմ բոլորովին դադարել է ստանալուց։ Շոգենաւերը չեն համաձայնվում այնտեղ գնալ, ի նկատի ունենալով երկարատև կարանտինները, որ նրանց համար ձեռնտու չեն։ Ցանկացողներն էլ այնպիսի նաւավճար են պահանջում, որը բոլորովին համապատասխան չէ այժմեան ընկած գներին։ Հնդկաստանի թէյը, որ այստեղից անցնում էր Անդրկասպեան երկիրը, նոյնպէս դադարել է։

Վերջապէս մարտի 2-ին թատերասէրները խաղացին «Թուրք խաղացողի կեանքը» դրաման։ Գլխաւոր դերերը աջողութեամբ կատարեցին պ.պ. Մ. Համբարձումեան, Հ. Սողոմոնեան, Յ. Ճգնաւորեան։ Ամալիայի պատասխանատու դերը կատարում էր օր. Արմենուհի (գաղթականներից)։ Եթէ ի նկատի առնենք, որ օրիորդը առաջին անգամն է մասնակցում նրա խաղը պէտք է համարել բաւարար։ Տոմսակների վաճառումից ստացվել է մօտ 600 ռուբլի։

Ինչպէս լսեցինք, Նովոբասիյսկ հաւաքվել են չատ յոյներ՝ հայրենիք գնալու համար։ Դրանց մէջ, բացի զինուորներից, կան նաև չատ կամաւորներ։

Ա. Մակարեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Մարտի 2-ին

Ստարոսելսկու սպանութեան գործը

II

Եօթ հոգուց մեղադրվում են երկուսը ուղղակի սպանութեան մէջ, երկուսը անուղղակի կերպով՝ կատարված սպանութիւնը և գործը ծածկելու մէջ, իսկ մնացած երեքը՝ կայտառելու, սպանութիւնը գլուխ բերելու մէջ։ Մեղադրվողները իրանք իրանց մեղաւոր չեն ճանաչում. այդ մասին նրանք իրանց ցուցմունքները ունեն —հետաքրքիր ցուցմունքներ՝ փոփոխած մի քանի անգամ, յարմարացրած, կոկած ու ստրքած հմտաձայն հանգամանքների... Մաչադի Մահմէդ բէկ 1895 թի նոյեմբերի 16-ի քննութեան ժամանակ ցոյց է տալիս, թէ սպանութիւն կատարված գիշերը, նոյեմբերի 14-ին, ինքը երեկոյեան 5 ժամից սկսած քէֆ էր անում Արտեմիեվի զինեխանութեան և զանազան հասարակաց տներում. տուն վերադարձել է գիշերվայ ժամի 2-ին։ Նոյն Մաչադին 1896 թ. յունվարի 2-ին փոխում է իր ցուցմունքը այսպէս. «Նոյեմբերի 14-ին ես քէֆ էի անում նախ Բաբայի զինեխանութեան, ապա Սերովբի։ Երեկոյեան $10^1/_2$ ժամին մեր ամբողջ կօմպանիայով ուղեւորվեցինք հասարակաց տներ, յետոյ չուտով այդ տեղից տուն վերադարձայ։ Ճանապարհին Ֆատախ Ակիմ օղլին ինձ յայտնեց, թէ Բաքիխանովը կանչում է։ Գնացինք։ Բաքիխանովը կանգնած էր Հիւսէյն Ղուլու խանութի մօտ։ Նա յանձնարարեց, որ ես Քալբալայի Հիւսէյնի հետ գնամ և տեսնեմ, թէ կլուրնումն է տուս փատաքանը» (Ստարոսելսկի)։ Այդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ՝ ինձ տուն ճանապարհեցին. մեկնելուց ես նկատեցի, որ Բաբիխանովի մօտից երկու հոգի բաշլիղներով՝ բաժանվեցին և գնացին դէպի վերև (այդ երկուսի անունները տալիս է), յետոյ ճանապարհին ես մօտեցայ ոստիկան Ամիդուլին և իմացայ, որ Գիւլ Ղասումը նրան յորդորում է, որ գնայ Շամախու ճանապարհը որպէս թէ մի խումբ թուրք խաղացողներին բռնելու։ Ոստիկան Ամիդուլլան չը գնաց Շամախու ճանապարհը, այլ գնաց մօտիկ քարվանսարան՝ ուրիշ թուրք խաղացողներին փնտռելու։ Ես էլ գնացի տուն։ Միւս առաւօտ Ֆատահ և Գիւլ Ղասում Բաքիխանովի կողմից ինձ զգուշացրին, որ երէկվայ տեսածներս և լսածներս ոչ ոքի չը յայտնեմ։» Մահմէդ Բիզա-բէկ Բաքիխանով, թէ 1895 թի նոյեմբերի 20-ին և թէ 96 թի յունվարի 27-ին ցոյց է տալիս, թէ Ստարոսելսկու սպանութեան գիշերը ինքը Աշակպեար Մահմէդովի և Մաչադի Դաղաչեվի հետ մինչև գիշերվայ ժամի 1-ը եղել է հասարակաց տներում։ Իսկ փետրվարի 27-ին—Մաչադի Մահմէդ բէկի ցոյց տուած վերոյիշեալ իր համար աննպաստ ցուցմունքից յետոյ՝ աւելացնում է, թէ Մաչադի Մահմէդ բէկը իր հետ թշնամական յարաբերութիւնների մէջ է այն ժամանակվանից, երբ ոստիկանութիւնը իր՝ Բաքիխանովի միջնորդութեամբ նրան դուրս է քշել Բաղուից։ Այդպէս էլ արդարանալու և մեղքը ուրիշների վրա գցելու փորձեր անում են միւս մեղադրվողները։

Հերթը հասնում է վկաներին. մեծ մասը թուրքեր են։ Կրէյսլէր, Ստարոսելսկու վաղեմի բարեկամը վկայում է նոյնպէս, թէ Ստարոսելսկին մահից առաջ յայտնեց իրան, թէ իրան սպանել ուզողներն են՝ Մանաֆա և քաղաքային վարչութեան անդամ Բալաբէկը։ Ապա պրոկուրորի և պաշտպանների հարց ու փորձին Կրէյսլէր աւելացնում է, թէ այդ սպանութիւնը չը պէտք է վերագրել ուրիշ հանգամանքների. ճիշդ է, հանգուցեալ Ստարոսելսկի լաւ հոչակ էր ձեռք բերել կանանց շրջանում և միշտ էլ աջողութիւն էր գտնում, բայց այդ ասպարէզում թշնամիներ չունէր և չէր էլ կարող ունենալ։ Դէպի Ստարոսելսկու թոյլ կողմը յարուցած այդ կասկածը միանգամայն փարատելու համար—Կրէյսլէր չեշտեց մի ուշադրութեան արժանի հանգամանքի վրա։ Ստարոսելսկին մահվան անկողնում խոստովանելով քահանային իր մեղքերը՝—կտակ է կազմել տալիս ի նպաստ դերասանուհի Սաբլինայի և իր սպասաւորուհու... Այդ կտակը թէև ինքը չէ կարողանում ստորագրել, բայց ստորագրում են ոստիկանապետը և ուրիշները։ Վերկայ Բօնդի, որ չատ մօտիկ յարաբերութիւնների մէջ է լինում հանգուցեալի հետ—հաստատում է նոյնպէս, թէ Ստարոսելսկի, մահից առաջ, ասաց, թէ Մանաֆան և Բալաբէկն են սպանել տալիս իրան։ Բացի դրանից, այդ դաւադրութեան վերաբերմամբ, Մօլլա Շահբազ օղլին մի քանի անգամ զգուշացրել է հանգուցեալին, որը զգուշութեան համար իր հետ կը բերում էր չարունակ ատրճանակ։ Բօնդիի ցուցմունքի մէջ՝ Բալաբէկի վերաբերեալ, պաշտպանը նկատում է հակասութիւն, որովհետև քննիչի մօտ նոյն վկան ասած է եղել՝ թէ Ստարոսելսկին ուղղակի չը յիշեց Բալաբէկի անունը, այլ մի ուրիշի անուն։ Այդ առիթով

ռաջնորդեր երբէք իսլամական խղճմտութիւնը քրիստոնեայ աշխարհից եկած մի բարեփոխութիւն ընդունելու։

Կը լսեն, կը խոստանան, և ի հարկին կը ստորագրեն, բայց իսլամի ոգին կը մնայ մշտանջենաւորապէս ապստամբ, և հետևանքը կը լինի ճիշտ այնպէս, ինչ որ եղել է մինչև այժմ։

III

Մեղ համար հարցը պարզ է, անհաւասիկ։

Քանի որ կայսրութիւնը կարող է իրան պահել միայն բարենորոգումներով, և որովհետև իսլամը ապստամբ է արտաքուստ եկած ամեն բարեփոխումների, ուստի ուր պէտք է որոնել այս անհրաժեշտ բարենորոգումները։ Այստեղ խնդրում ենք վերստին անցնել մի քանի պատմական նկատողութիւնների։

Արդէն յիշեցուցինք, թէ ինչպէս իսլամութիւնը Ասիայի բռնակալութեան ներքև ընկճվեց։ Հարկ է աւելացնել, որ այժի և զօրութեան յաղթանակը միայն քաղաքական հողի վրա լրացված էր։ Միմեանց հակառակ երկու սկզբունքների կռիւը կրօնական սահմանի մէջ երբէք չը դադարեց։ Իսլամի բոլոր պատմութիւնը և Արևելքի ընդհանուր փիլիսոփայական դպրոցները լիքն են մի անողոք և կատաղի կռվի իրադարձութիւններով, որ անընդհատ չարունակվեց հաղար ու մէկ խորհրդաւոր ձևերի ներքև։ Վերջին ժամանակներում այս կռիւը խիստ սատկացաւ եւրոպական գաղափարների չոչափումով։ Համարեա բոլոր մուսիմական երկիրներում քաղաքական—կրօնական աղանդներ կազմվեցան, որոնք զանազան անուանումների ներքև ներկայացնում են իսլամի նոր ոգին։

Եւրոպան ընդհանրապէս չը դիտցաւ սոյն ընկերութեանց էութիւնը և յատկանիշը։ Այն ընկերութիւնը, որ ամենից աւելի հռչակվեց, սա այն կուսակցութիւնն է, որ անճիշդ կերպով երիտասարդ Թուրքիա է կոչվում։ Սրա ծագումը և պատմութիւնը յայտնի է։ Իր ամենից նշանաւոր ցոյցը սահմանադրութիւնն էր, զոր Միհաթ փաշայի սահմանադրութիւնն են ասում։ Սա առաջին անգամն է, որ այսօրինակ մի բարեփոխում դուրս էր գալիս իսլամի ուղեղից։ Դրժբաղդաբար, Եւրոպան այս շարժման արժէքը չը կարողացաւ ըմբռնել, մինչդեռ սա էր միակ դուռը, որտեղից կարող էր ներս մտնել բարենորոգման ոգին, սա էր միակ միջոցը իսլամը նոր գաղափարների հետ հաշտեցնելու համար։

Հին դիպլոմատների մէջ, միմիայն մինը դրութեան ճշմարիտ զգացմունքն ունեցաւ։ Սա սըր Հէնրի Էլիոտն էր, Անգլիոյ դեսպանը։ Նա տեսաւ Արևելքի ծանր ցաւը, բռնակալական ցաւը, և նրան մեղմացնելու, թեթևացնելու համար կարճ ժամանակամիջոցում արաւ այնքան, ինչ որ Եւրոպան մի դարի ընթացքում չէր կարողացած անել։

Միհաթի սահմանադրութիւնը անտարակոյս թերի էր, բայց ոչինչ արդելք չը կար աստիճանաբար վերաքննելու։

Մենք համոզված ենք, որ Թիւրքիան բարենորոգմանց կարօտ է. ուրիշ տեսակ բարենորոգումներ, որոնք ուրիշ լոյսեր, ուրիշ ջանքեր են պահանջում, բայց այս հիմնական բարենորոգմանց հասնելու համար հարկ էր, նախ և առաջ, բաղմադարեան պատնէշներ խորտակել։

Միհաթի սահմանադրութիւնը միակ բացված մուտքն էր, որտեղից իսլամը պիտի կարողանայ անցնել տալ ապագայի մեծամեծ փոփոխութիւնները։

Եւրոպայի գործը մանաւորապէս դիւրանում էր։ Փոխանակ իր անօգուտ ջանքերը խալիֆի մօտ սպառելու, իրան կը մնար միայն իսլամի առաքեալներին խօսել տալու։ Կենաց, ինչից և պատուոյ երաշխաւորութիւնները, որոնք մինչ այն ատեն ի զուր պահանջված էին, մուսիմական ուղղափառութեան օժանդակութեամբ կատարելապէս կիրառվում էին։ Դիպլոմատական Եւրոպան այս առիթիւ անմորոդելի սխալներ գործեց, փոխանակ պաշտպանելու մի շարժում, որով բարիքների մի բեղմնաւորութիւն կարող էր ձեռք բերել, ինքը միացաւ նոյն վարչական եղանակին հետ, զոր կարծում էր բարենորոգել։ Մինչև անգամ միապետական իշխանութեան ոստիկանը հանդիսացաւ, մի Միդհաթ փաշա յանձնեց, և օսմանեան առաջադէմ կուսակցութեանց անդամներին էլ Եւրոպա մնաց արդելեց, այն ինչ բոլոր անցեալի և ներկայի իրականութիւնները կենդանի ապացոյցներ են ցոյց տալու համար, որ Արևելքում փրկութեան միակ միջոցը առաջադէմ կուսակցութեանց զարգացումն է։ Եւ դիպլոմատիան հաղար ու մէկ օրինաւոր միջոցներ ունէր սոյն կուսակցութիւնները կանգուն պահելու, լուսաւորելու, քաջալերելու և բարձրացնելու, առանց պէտք զգալու այն եւրոպական համաձայնութեան, որ միայն աջողեցաւ բռնաբարութիւնը և անպատժութիւնը երաշխաւորելու։

Իրաքանչիւր պետութիւն, իրաքանչիւր դեսպան այն ազատարար շարժման օգտին կարող էր իր արդիւնաբեր գործակցութիւնը չը խնայել, առանց իր միջազգային պարտականութիւնից յետ կենալու։ Սըր Հէնրի Էլիոտին օրինակը բաւական է, եթէ նրան հետևէին, Ասիայի զարթումը և մուսիմական վերանորոգումը իրանց բնական քայլերով կառաջանային, բոլոր Արևելք խաղաղութեամբ կը փոխակերպվէր, և վերջին աղէտներից ոչ մինը տեղի չէր ունենայ։

(Կը շարունակվի)

Բոնդի բացատրում է. «Որովհետև երկիւղ էի կրում, նրա համար ծածկեցի այն ժամանակ, երբ յիշեցի Բալաբէկի անունը. սա չէ յայտնի, որ մեզանում, այստեղ վտանգ է սպառնում ամենմի մարդու, ով այդպիսի դէպքերում կչիռ ունեցող վկայութիւն է տալիս ի վնաս այս և այն կողմի... այժմ ասում եմ ճշմարիտը, չեմ թագցնում և համոզված եմ, որ չեմ սխալվում՝ Բալաբէկի անունը տալով։» Նախկին հաչտարար դատաւոր Սմօլենսկու վկայութիւնից երևում է, որ Ստարօսելսկին հողային դատ է ունեցել զաբբաղցիների հետ, որոնց թւում եղել է և Մանաֆան։ Վիճելի հողաբաժինը Մանաֆան համարել է իր սեփականութիւն. Ստարօսելսկի հակառակել է և սպառնացել նոյն իսկ՝ նրան բանտարկել տալու։ Մանաֆան աչխատել է ապացուցանել և ներկայացրել է գոկումենտներ։ Դատարանում Ստարօսելսկի հերքել է և ապացուցել ներկայացրած այդ գոկումենտների կեղծութիւնը. գործի հետևանքը հասցրել են պրոկուրորին թէ ոչ,—այդ մնում է անյայտ...

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, մարտի 4-ին

Հայոց Բարեգործական ընկերութեան Երևանի վարչութիւնը «Մշակի» № 25-ի մէջ տպագրած նամակում յայտնում է ի միջի այլոց, որ Երևանում մեր տուած «Սիւզան և Իմբէր» ներկայացման արդիւնքից որպէս թէ մենք յանձնել ենք պ. Տ. Յովհաննիսեանին 75 ր. յօգուտ չքաւոր ուսանողների։ Մեր բարոյական պարտքն ենք համարում յայտնել, որ վարչութեան արած այդ նկատողութիւնը պ. Տ. Յովհաննիսեանի մասին բոլորովին անհիմն է։

Օր. Վարդիթեր Ա. Ֆելէկեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են հետևեալը Շվեյցարիայի Ցիւրիխ քաղաքից. «Քաղաքի ուսանողութեան մասին, ինչպէս և ուսումնական հաստատութեան համար ուրիշ առթիւ գրել խոստանալով, պարտյանձին կը զգամ այսօր հաղորդելու, թէ մարտ ամսվան կիսամեակի յայտագրի մէջ (բազմարուեստեան վարժարան) կը տեսնենք չաբթական մի ժամով ազատ ընթացք մը «L'Arménie et les Arméniens; les Turcs d'Asie et d'Europe», պատմական և քաղաքական գիտութեանց բաժնին մէջ։ Դասախօսը պրոֆէսօր Guilland է, յոյժ հեղինակութիւն ունեցող անձն։»

—

Մեր թղթակիցը Կիևից, մարտի 1-ից մեզ գրում է. «Կիևի լրագիրներից «Жизнь и Искусство» լրագիրը ուշադրութեամբ հետևում է արևելեան հարցին և առիթ չէ բաց թողնում իր նկատողութիւնները (միշտ նպաստաւոր) անելու։ Այսպէս, նա իր 60-դ համարում տալել է հետևեալ փոքրիկ նկատողութիւնը, որ իսկապէս արժանի է ուշադրութեան։ Ամբողջապէս բերում ենք թարգմանութիւնը, «Պատանի հերոս։— Փետրվարի 26-ին, № 4 գնացքով Օդեսայից Կիև ժամանեց կալանաւորների հերթական խումբը, որի մէջ ակամայ ուշադրութիւն է գրաւում 14 տարեկան մի տղայ, բաւականին գեղեցիկ բլօնդին, արտայայտիչ աչքերով և ինքն էլ շատ համարձակ։ Իր ասելով, նա Պետերբուրգի ճիաքարշ-երկաթուղու կօնտրոլեօրի որդի է։ Թէ լսած լինելով և թէ անձամբ կարդացած լինելով թուրքերի՝ քրիստոնեաների վերաբերմամբ կատարած գազանութիւնների մասին, ու յաճախակվելով յոյների հերոսական կռիւներով ու աջողութիւններով, նա վճռեց գնալ Կրետէ կղզին, որպէս զի, ինչպէս ինքն է ասում, պատժէ թուրքերին և չնորհակալութիւն յայտնէ յոյներին։ Բայց պատանի հերոսը աչքի առաջ չէ ունեցել, որ Կրետէ կղզին հասնելու համար անհրաժեշտ էր արտասահմանեան անցագիր ձեռք բերել, ուստի և նրա ճանապարհորդութիւնը եղաւ մինչև Օդեսա, որտեղից այժմ նրան վերադարձնում են իր բնակատեղին։ Շատ ցաւալի կը լիներ, աւելացնում է լրագիրը, եթէ բանտային քաղաքակրթութիւնը (цивилизація) արդէն կարողացել է աղդել այս համակրելի և, ըստ երևոյթին, ընդունակ տղայի վրա, չնորհիւ նրա երկարատև կայութեան կալանաւորների չրջանի մէջ»։ Ինչպէս տեսնում էք, այս օրինակը ուշադրութեան արժանի է, թէկն շատ մանաւոր է, բայց և այնպէս ցոյց է տալիս, թէ կան սրտեր, որոնք իսկապէս խիստ ցաւ են զգում և նոյն իսկ ուզում են արտայայտել իրանց սրտի դառնութիւնը թիւրքաց արած գազանութեան դէմ, բայց»...

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ աւագ հինգշաբթի Պետերբուրգ պէտք է գան օգոստափառ հիւրեր։ Ամենից առաջ Պետերբուրգ կը գայ աւստրիական կայսրը, ապա Սիամի թագաւորը, գերմանական կայսրը, իտալական գահաժառանգը իր ամուսնու հետ, չերնոգորեան իշխանը և ամենից յետոյ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆէլիկս Ֆոր։ Վերջինս պէտք է այցելի և Մոսկվա։ Նրա համար պատրաստվում է Պետերհոֆի պալատը։

—

Թիֆլիս է եկել Վանի անգլիական փոխ-հիւպատոս կապիտան Էլիօտ։ Նրա նախորդը, Վիլիամս, Վանի խառնակութիւնների ժամանակ մի այնպիսի դիրք և ընթացք էր բռնել, որը, ինչպէս ասված է ֆրանսիական մի ամսագրում, «արժանի է յարուցանելու քաղաքակիրթ աշխարհի նախատինքը»։ Ցոյս ունենք, որ նոր հիւպատոսը չի հետևի իր նախորդի պախարակելի ընթացքին։

—

Ինչպէս կը կարդան մեր ընթերցողները հեռագիրների մէջ, Կ. Պոլսի հայոց պատրիարք Օրմանեան պատրաստվում է հրաժարական տալու։ Զարմանալի մարդիկ են մեր հոգևորականները. նրանց համար կարծես պատմութիւն, փորձ, հեռատեսութիւն գոյութիւն չունեն. ամեն մինը նրանցից կարծում է, որ պատմութիւնը իրանով պէտք է սկսվի և իրանով վերջանայ։ Իզմիրլեանի պատրիարքութեան պատմութիւնը պէտք է համոզէր Օրմանեան պատրիարքին, որ ներկայ պարագաներում, երբ ամեն բան տակն ու վրա է եղած Թիւրքիայում, անհնարին է կատարել պատրիարքական պաշտօն, անհնարին է հաւատ ընծայել սուլթանական խոստումներին, բարենորոգութիւններին, ցնորք է կարծել, թէ Բ. Դուռը կաչկանդի հայոց պատրիարքին թշուառ հայ ժողովրդի վիճակը բարելաւելու համար։ Այժմ այդ բանի մէջ ինքն անձամբ համոզվեց Օրմանեան, բայց այդ փորձը շատ թանգ նստեց Թիւրքիայի թշուառ հայ ժողովրդին։

—

Կիրակի, մարտի 9-ին, երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց իշխան Նիկոլայ Ճավճավաձէ, որի անունը և համբաւը լաւ ծանօթ է մեր երկրին։ Նա երկար ժամանակ վարել է Գանձակի նահանգապետի, ապա Դաղստանի չրջանի զինուորական նահանգապետի պաշտօնը, որից արձակվելով մի տարի առաջ, նշանակվեց Ալէքսանդրեան կօմիտէի անդամ։ Ցայտնի էր իբրև եռանդուն, հաստատ բնաւորութեան և զօրեղ կամքի տէր վարչական անձն։ Թէ Գանձակի նահանգի և թէ Դաղստանի ազգաբնակութեան մէջ մեծ ժողովրդականութիւն և համարում էր ձեռք բերել։

—

Երիտասարդ քնագէտ և հմուտ դասախօս Վալերիան Լունկեվիչ այս մեծ պասի ընթացքում, անցեալ տարվայ նման, մտադիր է երեք հանրամատչելի դասախօսութիւն կարդալ՝ երեխաների և աշակերտների ու աշակերտուհիների համար։ Առաջին դասախօսութեան նիւթը վերցրած կը լինի կենդանիների կեանքից, երկրորդը՝ բոյսերի կեանքից, իսկ երրորդ դասախօսութիւնը պէտք է վերաբերի բնութեան հրաչալի երևոյթներին։ Դասախօսութիւնները տեղի կունենան Թիֆլիսի «Կրուժոկում», կիրակի օրերը, առաջինը՝ մարտի 23-ին, երկրորդը՝ 30-ին, երրորդը՝ ապրիլի 6-ին, ցերեկվայ 12 ժամից մինչև 2 ժամը։ Դասախօսութիւնները տեղի կունենան մոգական պատկերներով։

—

Ղամարլուի գիւղից մեզ գրում են. «Մի քանի տուն գաղթականներ, ի նկատի ունենալով, որ Ղամարլուն հարուստ գիւղ է և իրանք կարող են լաւ ապրել, մի կերպ տեղ գտնելով բնակվեցին այստեղ, բայց իզուր։ Ոչ ոք նրանց վրա ուշադրութիւն չէ դարձնում. աղքատը չունի միջոց օգնելու, իսկ հարուստն էլ չունի ժամանակ այդ չնչին արարածների վրա մտածելու, որովհետև զբաղված է իր գործերով, այն է խնդիրներ տալով, միմեանց դէմ թակարդներ լարելով։ Զգայմունք, խիղճ նրա մէջ մեռած է։ Վաճառական աղաները չեն կամենում գտնէ ժամանակաւորապէս թողնել իրանց ներքին թշնամութիւնը և օգնել թշուառներին, լրագիրներում գրուածները չեն ազդում պարոնների վրա, ամենքան մոռացել են և աչխատում են առաջ տանել իրանց մշտական գործը, այն է խորտակել միմեանց։ Դրանց վրա չէ ազդում և առանձին անհատների ասածը։ Մօտ օրերս մեր պրիստաւը կանչելով գիւղի հարուստներից մի քանիսին՝ առաջարկեց հանգանակութիւն անել յօգուտ գաղթականների, բայց ով կատարեց—ոչ ոք. առաջարկութիւնը լսեցին և հանգիստ հոգով խանութները նստելով չարունակեցին իրանց առևտուրը։ Ե՞րբ պէտք է այդ աղաները վերջ տան իրանց վէճերին, Ե՞րբ պէտք է հանգիստ թողնեն ժողովրդին և վերջապէս մինչև Ե՞րբ այդ մի քանի պարոնները պէտք է արատաւորեն ամբողջ գիւղի անունը»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Վեհափառ Կաթողիկոսը հրամայել է, որ եպիսկոպոսներից իւրաքանչիւրը, ըստ աւագութեան, պէտք է կիրակի երեկոները քարոզ ասեն տաճարում, իսկ վարդապետները նոյն կարգով վաղարչապատի եկեղեցում։ Առաջին անդամ ինքը Վեհափառը խօսեց մարտի 2-ին։ Տարաբաղդաբար, եկեղեցին զրեթէ դատարկ էր. ներկայ եղողները մեծ մասամբ գիւղերից եկած գաղթականներ էին։ Վեհափառը խօսեց կեղծաւորութեան մասին, յիշեց աւետարանի փարիսեցուն և մաքսաւորին, յիշեց նոյնպէս իր երիտասարդ ժամանակը, երբ ինքը հասկէ 25 տարի առաջ Պեշիկթաշի ս. Աստուածածին եկեղեցւոյ քարոզիչ էր և քարոզը վերջացրեց մի քանի ծիծաղաշարժ պատմութիւններով»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Անգլիական համայնքների ժողովի մարտի 9-ի նիստում տեղի ունեցաւ հետևեալ կարճ հարց ու պատասխանը։

Մակ-Նէյլ. Ես խնդրում եմ արտաքին գործերի քարտուղարից պատասխանել թէ՝ ճիշդ է արդեօք, որ Կ. Պոլսի կոտորածների միջոցին եղած ոստիկանութեան մինիստր Նազիմ փաշան այժմ նշանակվել է կառավարչապետ Բէյրութի չրջանում. ինչպէս կարող էր մի այդ տեսակ նշանակում տեղի ունենալ այն բարեփոխութեան սիստեմի ժամանակ, որ խոստացել է օսմանեան կառավարութիւնը։

Կարգօն. Մենք այդ նշանակման մասին ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չունենք։

—

«Daily News» լրագիրը հաղորդելով, որ Միդհատի նախկին քարտուղար Իսմայիլ Քեամիլ բէյ մշակել է Թիւրքիայի բարենորոգութեան նոր ծրագիր, չէ հաւատում վերջինիս բարի ազդեցութեան նոյն իսկ այն դէպքում, եթէ նա իրագործվի։ Իսմայիլ Քեամիլ բէյ եղել է պետական խորհրդի անդամ և հաւատում է Թիւրքիայի վերածնութեան գաղափարին։ Նրա ծրագրով պէտք է Թիւրքիայի զանազան մասերում կազմվեն մանր-մունր պետական մարմիններ, իսկ բոլորի ընդհանուր, կենտրոնական, գերիշխող և միմեանց կապող ներկայացուցչութիւնը և իշխանութիւնը լինի Կ. Պոլսում։ Լրագիրը կարծում է, թէ Թիւրքիայի պետական մարդիկ այդ ծրագիրը կը հասկանան այնպէս, որ պէտք է կազմել մի քանի պետութիւններ իրանց սուլթաններով, որոնց գլխին գերիշխող կը լինի ներկայ սուլթանութիւնը։ Թիւրքիայի գործերը բարենորոգել այլ ևս չեն կարող այդ տեսակ ծրագիրները։

—

Ցայտնի ռուս պրոֆէսօր Կոմարովսկի մի նոր յօդուած է տպել «Журналъ Междунар. и Госуд. Права» ամսագրում Կրետէի մասին։ Պատմելով համառօտաբար Կրետէի պատմութիւնը և այն դառն վիճակը, որի մէջ գտնվում է չարաբաստիկ կղզին թիւրքաց տիրապետութիւնից ի վեր, պրոֆէսօրը յայտնում է, որ թիւրքերը անխնայ կոտորելով կրետացիներին, կրճատել են կղզու աղգաբնակութեան քանակութիւնը 70 տոկոսով։ Վենեցիայի տիրապետութեան ժամանակ կղզին ունէր 1,000,000 բնակիչ, իսկ այժմ մնացել է 281,000 հոգի։ 1878, 1889 և 1896 թուականների ապստամբութիւնների հետևանքներն եղան սարսափելի գազանութիւններ թիւրքերի կողմից և կղզու աննկարագրելի աւերումներ։ Իրերի այդ դրութեան մէջ, պրոֆէսօր Կոմարովսկի անհրաժեշտ է համարում Կրետէի միացումը Յունաստանի հետ։

Ցարակոյս չը կայ, որ Կոմարովսկու բերանով խօսում է զուտ գիտութիւնը, անաչառ և արդարադատ գիտութիւնը։

—

«Berliner Tageblatt» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, մարտի 2-ից. «Խօսում են, որ այս օրերս Բ. Դուռը յիշատակագիր է ուղարկելու յունաց կառավարութեան, որով պահանջում է յունական զօրքի հեռացնելը Կրետէից, սպառնալով, հակառակ դէպքում, ուղարկել 80,000 զօրք Թէսալիա։ Թիւրքիան չարունակ զինուորվում է, մինչ Յունաստանը պատրաստ չէ պատերազմի և կարող է սահմանագլխի վրա դնել միայն 10,000 զօրք։

«Աթէնքից, մարտի 2-ին, ոչ մի նամակ չէ ստացվել Կ. Պոլսում։ Դրանից եզրակացնում են, որ պաշարումն արդէն սկսվել է։»

—

Վիէննայից հեռագրում են մարտի 4-ից, որ պաշարման հրամանի կատարումը կը յանձնվի իտալական ծովապետին, իբրև ասիճանով աւագագոյին։ Միացեալ նաւատորմների ծովապետները խորհրդակցում են ներկայումս Վօլօ կայարանի պաշարման կազմակերպութեան մասին։ Վօլօն յունական զօրքի պաշարեղէնի պահեստի գլխաւոր կայարանն է։

—

Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ սուլթանը մտադիր է պատաւոր քաղաքացիներից մի խորհուրդ գումարել ընդհանուր բէֆորմների մի նոր ծրագիր մշակելու համար։

Հետաքրքիր է իմանալ, այդ քանիերորդ ծրագիրը կը լինի։

—

Վիէննայից հաղորդում են «Independance Belge» լրագրին, որ մեծ պետութիւններից մէկը առաջարկում է միւսներին ուղարկել Կրետէ զօրախմբեր, իւրաքանչիւրը 2,000 զինուորից բաղկացած, կղզին գրաւելու և այնտեղից յունական զօրքը դուրս քշելու համար։ Մեծ պետութիւնները քննում են այժմ այդ առաջարկութիւնը։

—

Պարիզի քաղաքային վարչութիւնը, չը նայելով պրեֆէկտի բողոքին, 48 ձայների մեծամասնութեամբ որոշել է համակրական ուղերձ ուղարկել յունական կառավարութեան։

—

«Հավասի» գործակալութիւնը հաղորդում է, որ Կրետէում տեղի ունեցող կռիւները ամենայուսահատական կերպարանք են ընդունել և ամեն բան տանում է դէպի զարհուրելի ալէտ։ Մահմետականները խելագար յուսահատութեան են հասել, քրիստոնեաները լցված են վրէժխնդրութեամբ և մահմետականներին ամբողջովին կոտորելու ցանկութեամբ։ Մահմետականները փոքրում և կողոպտում են գերեզմանները, պղծում են եկեղեցիները և վանքերը, հրդեհում են քրիստոնեաների գիւղերը։ Նրանց գլխաւոր ապաստարանը գտնվում է Հերակլիօնում, որտեղ ժողովվել են մօտ 50,000 հոգի, որոնք արդէն ուտելիքի մեծ պակասութիւն են զգում։

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՑ

—

Ռուսճուք, փետրվարի 28-ին

Ամեն տարվայ սովորութեան համեմատ, այս տարի ևս, փետրվարի 20-ին, ս. Մեսրոբեան վարժարանում տեղի ունեցաւ վարդանանց հանդէսը։ Հանդէսը այս տարի չատ չքեղ և ուրախալի երևոյթ մը ունէր, վասն զի ամեն տարի վարժարանի մէջ կը տօնվէր, իսկ այս տարի, գարնան գեղեցիկ օրին, դուրսը՝ բակին մէջ տօնվեցաւ, ուր մարմնամարզարանը, կամարի վերածելով՝ զարդարած էին զանազան դրօշակներով, պատկերներով ու պակներով, որոնք մեծ փայլ մը կը տային հանդիսին։ Մի քանի անձինք ճաւեր խօսեցան, համառօտակի ակնարկ մը նետելով վարդանանց ժամանակի դրութեան վրա։ Իւրաքանչիւր ատենախօսու-

թենէ կամ ստանաւորէ վերջ՝ վարժարանին աշակերտները կերգէին զանազան հայրենասիրական երգեր։ Հանդէսը լաւ տպաւորութիւն թողուց ժողովրդին՝ մանաւանդ գաղթականաց վրայ։

Ց. Գէորգեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմիա, փետրվարի 28-ին

Այս օրերս Վանից այստեղ հասաւ Մր. Հէրբերտ Ալլէն, որ անցեալ դեկտեմբերի վերջերը ուղարկվել էր այն կողմեր Վասպուրականի բազմաթիւ կարօտելոց նպաստ բաշխելու գործին աջակցելու։ Նա եկած է մի քանի հաղար եղ և դոմէշ դնելու, որոնք պիտի ընծայվեն կողոպտուած հայ երկրագործ ժողովրդին, որպէս զի առաջիկայ գարնան սրից և սովից ազատած հայ գիւղացիք կարողանան իրենց սովորական վար ու ցանքը անել։ Ազնիւ միսիոնարին այդ մեծ և կարեւոր ձեռնարկութեան մէջ աջակցում է Շատախցի Շահէն աղան, որ նշանաւոր հանդիսացած է վանում իբր յաջողակ և ճարտար առևտրական մի անձ։

Վանում այժմ կան 2,500 երկսեռ որբեր, իսկ զրանց թիւը բովանդակ Վասպուրական լայնածաւալ նահանգում հասնում է 5,000-ի։ Ամերիկեան միսիոնարը արդէն սկսել են այդ թշուառ հայ զուակների տխուր վիճակի վրա ուշադրութիւն դարձնել և միջոցներ են ձեռք առնում նրանց կա օգնելու։ Նրանք հաստատում են երկսեռ որբանոցներ Հայաստանի գլխաւոր կենտրոններում։ Վանի որբանոցում այժմ իբր 200 անտուն անտէր երկսեռ մանկիկք խնամք են վայելում և մտադրութիւն կայ նորից ընդարձակ շէնքեր կառուցանել, որպէս զի աւելի ստուարաթիւ խումբերին կարելի լինի պատսպարան հայթայթել։ Այս մարդասիրական ձեռնարկը Եւրոպայում և Ամերիկայում մեծ համակրութեամբ է ընկալվում և առատաձեռն նըպաստներ են տրվում յօգուտ գործին։

Վանի անգլիական դեր-հիւպատոս մայոր Վիլիամսը, որի մասին այնքան դժգոհութիւններ և ծանր դանդատներ լսվեցին, վերջապէս հրաման ստացել է մեկնելու և նրան յաջորդելու է մայոր Էլիօտ։—Վանում հայ ժողովուրդը սկսել է կրկին իր սովորական զբաղումներին հետևել, սակայն մահմեդականք միշտ յուզված վիճակի մէջ ծփում են և չարունակ սպառնական է մնում կացութիւնը։

Արգոս

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԿՐԵՏԷ

ՊԱՐԻԶ, 8 մարտի։ Կիսապաշտօնական «Temps» լրագիրը սաստիկ դատապարտում է անգլիական դիմադրական կուսակցութեան պարագլուխ սըր Ուիլդ Հարկօրթի արտասանած ճառը։ Ֆրանսիական մինիստրական օրգանները յայտնում են, որ Հարկօրթ վարվում է որպէս Յունաստանի թշնամի, որովհետև չուզում է արդէն առանց այն էլ սաստիկ զրգռված կրքերը, որոնք կաչկանդում են հելլենական կառավարութեան գործունէութեան ազատութիւնը։

ԼՕՆԴՕՆ, 8 մարտի։ «Daily News» լրագրի տեղեկութիւնների համեմատ, կանէից յունական քանակն են ուղարկվում ֆրանսիական և իտալական օֆիցէրներ, որոնք յանձնարարութիւն ունեն առաջարկել գնդապետ Վասսոսին՝ նըստեցնել նաւերի մէջ իր զօրքերը և հեռանալ Կրետէից 36 ժամվայ ընթացքում։

ԼՕՆԴՕՆ, 9 մարտի։ Պաշտօնապէս յայտարարված է Կրետէի պաշարումը։

Կ. ՊՕԼԻՍ, 9 մարտի։ Հինգ զրահակիր նաւեր, Հասան Բամի փաշայի հրամանատարութեան տակ, Դարդանէլ գնացին։

Գլխաւոր հրամանատարը յունական սահմանի վրա՝ Էդհէմ փաշան, հրաժարական տուեց։ Սպասվում է նոյնպէս հայոց պատրիարքի հրաժարականը։ Վերջինս հրաժարական է տալիս վախեցած հայկական կոմիտէների զրութիւնից, որի մէջ կէտ առ կէտ ապացուցված է, որ թիւրքաց խոստմունքները ռէֆորմների վերաբերմամբ չեն իրագործված։

ԿԱՅԻՐԷ, 9 մարտի։ Թիւրքաց զինուորական դանձարանի համար Լիպ-փաշայի և ուրիշ ռադիկալների կողմից սկսած հանդանակութիւնը տուեց 15,000 ֆունտ։ Խէդիվը տուեց 2500 ֆունտ։

ԿԱՆԷՑԱ, 10 մարտի։ Պաշարման մասին յայտարարութիւնը տեղի ունեցաւ ամեն տեղ։ Կասկածում են, որ գնդապետ Վասսոսի զօրախումբը, եթէ մինչև անգամ յետ չը կանչվէր, կարողանար պահպանվել երկրի միջոցներով։

—

ԲԵՐԼԻՆ, 8 մարտի։ Մարտի 7-ին կայսրը ընդունեց ռուսաց գնդերի պատգամաւորութիւնը, որ եկել է Բերլին կայսր Վիլհէլմ I-ի ծնունդեան հարիւրամեակը նշնորհաւորելու առիթով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Մարտի 8-ին վաճանվեց յայտնի բանաստեղծ Ապօլլօն Նիկոլաևիչ Մայիով։

ԲԵՐԼԻՆ, 9 մարտի։ Բէյխստագը մերժեց կրեդիտ տալ առաջին կրէյսէրի համար 204 ձայնով 143-ի դէմ, երկրորդ կրէյսերի համար մերժեց առանց վիճաբանութիւնների։

ՍՈՒԷՅ, 9 մարտի։ Բրիտանական «Դիլվարա» բեռնակիր չոգենաւը Բոմբէյից զօրքերով գնալու ժամանակ, բռնվեց, որովհետև ժանտախտից մէկ մահվան դէպք եղաւ նրա վրա։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 7-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. .	93 ռ.	95 կ
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	90 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	$32^1/_2$ »
Ոսկի — — արժէ . .	— »	— »
Մաքսային կուպօններ — . .	149 »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	$5^3/_4$ —	$7^0/_0$ »
4% պետական բէնտա	99 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	278 »	— »
— — երկրորդ —	250 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	212 »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . .	$98^1/$	— »
$4^1/_2$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$101^3/_8$ »	— »
Ազն. կալ. Պետ բանկի խազարկութ.	— »	— »
$4^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի	$101^3/_8$ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ.	$101^7/_8$	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101^1/_4$ »	— »
Օդէսայի — —	100 »	—
Թիֆլիսի — —	$98^3/_4$ »	—
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	102 »	— »
5% — — — . .	$99^3/_8$ »	— »
Ռուխայիսի — — . .	102 »	— »
5% — — — . .	$99^1/_6$ »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բաթ. գուրս է գալիս	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	9 „ 55 „ երբ.	12 „ 25 „ ցերբ.
Թիֆլ. գուրս է գալիս	10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բաղու հասնում է	4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.

Բաղուից գուրս է գալիս	2 ժ. 30 ր. ցերբ.	11 ժ. 5 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	8 „ 21 „ առ.	5 „ 50 „ երբ.
Թիֆլ. գուրս է գալիս	9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում հասնում է	9 „ 45 „ երբ.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հենդ հոդու համար		
Թիֆլիսից գուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Գիշերում է	Մլեռում	Պասանաուր
Վլադիկավկազ հասնում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ.
Վեր հոդու համար (չեն գիշերում)		
Թիֆլիսից գուրս է գալ	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. 50 ր.
Վլադիկավկազ հասնում է	12 „ —ցերեկ.	8 երեկ. „

ՐԺՇԿԱԿԱՆ - ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԲԺՇԿԱՊԵՏ ԳՐԱՆՅԻՈՒՍԻ

Վէլիամինովսկայա փող. տուն № 4, Դումայի հանդէպ։ Բաց է 2—3 ժամ։

ՄԱՍՍԱԺԻ ԴԱՍԵՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

(№ 10) 7—10

ՄԱՍՍԱԺ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ զանազան հիւանդութիւնների բժշկելով ՄԱՍԱԺՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ։ Հիւանդների ընդունելութիւնը՝ $5^1/_2$—$6^1/_2$ ժամը երեկոյեան։ Աւչալեան փողոց, № 19։

20—148 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

ՎԱՐԺՈՒՀԻ

Կամենում է դասեր ունենալ ռուսերէն, ֆրանսերէն և մուզիկա, եօթից մինչև տասը տարեկան աղջկերանց հետ։ Պարապում է ժամերով։ Համաձայն է ընդունել և իր տանը։—Հասցէն՝ Барятинская улица, № 10։

(№ 26) 4—6

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՍԱՄՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնումն է Բաթումից՝ չորեքշաբթի, մարտ ամսի 19/31-ին ԱՆԱՏՕԼԻ չոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնները ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարէրէմնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Դ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիբեսկինսկայա հրապարակ։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերչինրոդերին։

(№ 16) 14—20

ԵՐԱՆՑ ԿՈՂՄՆԱԿԻ ՈՅԹԻ ԵՒ ԾԱԽՍԵՐԻ

ԼԵՄԻԶԵԼԻ

ՍԻՖՕՆ-ԷԼԵՎԱՏՕՐԸ

Բարձրացնում է ջուրը 35—70 և աւելի արշին

ԲԵԼՈՒ

Դաշտեր, այգիներ, պարտէզներ և այլն։

ՋՈՒՐ Է ՏԱԼԻՍ

Քաղաքներին, կալուածներին, ամարանոցներին, գիւղերին։

ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ Է ՋՈՒՐԸ

Զորագլուխները, սարերը և ամեն տեղ, ուր ջրի կարիք կը լինի։

(№ 136) 12—15

Ռուսերէն լեզուով բրոշիւրները ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻՍ

Դիմել Լ. Խան-Ազարանցին Тифлисъ, Мадеровская, собст. домъ.

ՋՐՀԱՆԵԼԻ

ԿԵՆՏՐՕՆԱԼՈՅՍ „ԼԻՏԼՍՏԻ" և ուրիշներ, խորհուրդ է տալիս գնել ԵՍԲԱԼՕՎ և ԱԼԻԽԱՆՕՎ խնժեներների ԳՈՐԾԱՏՈՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Պրէյսկուրանտը ձրի է ուղարկվում։ (№ 23) 5—5

ԲԷՐՏԱ-ՐԻՍԻ

Բիմիա-կօսմէտիկական լաբօրատորիա ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆ

ԿՕՍՄԷՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԵՐ

„ԲԷՐՏԱ-ՌԻՍ"

խնդրեմ ուշ դարձնել ստորագրութեան վրա։

ԷՕԺԷՆԻԱՅԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է չուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերում նաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մաղերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և բաչէլ (թուխ դէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անտեսանելի է աչքի համար, մորթին տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդային գոյն, որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՅԻՆ ԲԱԼԶԱՄ

(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արեհարքը, մունները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՅԻՆ

գլխի պօմադ Պէրուանական բալզամով եփած՝ մաղերը պնդացնելու, խտացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽՈՒՆՋԱՅԻՆ ՊՕՄԱԴ

նրա զօրծածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԼՍՍԷՆՑԻԱ

քեղերի համար (Ռիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Ռիս-Գուտման), սև, չազանակագոյն և խարտեաշ։ Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 չաբաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիկական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բագու։

(№ 26) 23—50

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԼԸ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ, արկղիկներում, $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ կիլոգրամ։ (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թուի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ դեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 48—50

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Марта 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 128.